

որուն գլուխը կը հանէ մանուածոյ ճամբայ մը: Լեւան ստորոտը կը տեսնուի առաջին խումբը, որուն մէջ կը գտնուի Ս. Հեղինէ խորհրդակցութեան մէջ Երուսաղեմի Ս. Մակար պատրիարքին հետ, որ և կը ցուցնէ տեղը ուր փորկու հետ են և կը գտնեն խաչը:

Կողակին մէջտեղը կը տեսնենք որ կը բարձրանայ երկրորդ լեռը, Հոռմը կը ներկայացնէ անոր ստորոտը առաջին գծին վրայ կը գտնուին Ս. Հեղինէ և Ս. Մակար, որ ճշմարիտ խաչին փորձը կ'ընեն: Մեռած պատանւոյն յարութիւնը պիտի ստուգէ անվրէպ թէ այն երեք խաչերէն որն է Փրկչին խաչը: Կը յաջորդէ երկրպագութիւնը: Կեդրոնը կնռմ մը պատկերը (Ս. Հեղինէ?) օրինակ եկեղեցւոյ, որ կը բարձրացնէ հսկայաձև խաչ մը՝ որ լեւան գագաթէն վեր կը բարձրանայ և ծիրանաւոր մը խաչին դարձած

ձնրադիր ազօթք կ'ընէ: Հոս կը վերջանայ Գիւտ խաչին տեսիլը: Անոր հետէն կու գան երկու խումբ զինուորներու, և ասոնց հետէն նոր բազմութիւն մը, որ կը շարժի դէպ ի երրորդ լեռը: Այս կողմին վերջին ծայրի պիտի ըլլայ Ֆիրենցէ:

Նկատմամբ ձախակողմեան նիւթին՝ կրնանք ըսել որ Գիւտը ոչ թէ լեւան գլուխը տեղի կ'ուսնենայ, այլ լեւան ստորոտը և նոյն աստիճանին վրայ ալ մեռած պատանւոյն փորձը: Հոս, ինչպէս և հետագայ ժամանակները, առաջին գուռաւորողին պատկերը՝ յետադոյն արուեստաւորէ մը (թերևս աշակերտ առաջնոյն), կը վերանկարուի և կը փոփոխուի, ինչպէս պիտի ըսենք երբ խօսինք՝ որմանկարին հեղինակին վրայ:

(Շարունակելի)

Թողմ. Հ. Ե. ՍԻՐՈՒՆ.

Հ. ԳՈՐԲ. ՆԱԶԱԳԵՏԵԱՆ

ՊԱՏՄԱՎԱՆ

ՀԱՅՔ Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

(Նախ տես թզմ. 1922 էջ 79)

Վերլոյշեալ նամակի թուղթն ճերմակ է և երկծալ ի հակասի կողմէն, որոյ երեսն զրոյմեալ է ի սփիւռ՝ ոսկեզարդ շուշաւնոց և որոյ կէս երեսն բովանդակէ գրութիւնն առ թագաւորն: Թղթոյն միջին կամ հակադարձ կողմն անզարդ է և պարունակէ Սպաներէն թարգմանութիւնն զոր ի վեր յիշատակեցինք:

Երկծալ թղթոյն երկայնութիւնն է 18 բթաչափ (incles), ուստի 36 երբ ընդլայնեալ ի մի էջ և լայնութիւնն է 13 բթաչափ կամ 26 ի մի էջ: Թուղթն, ոսկեշուշանք և գրութիւնն իսկ՝ բոլորովին անաղբատ և թարմ մնացած են ի հնճուկս երկու հարիւր և յիսուն տարիներ անցանէն այն ժամանակէն երբ սողուեցաւ: Կնիքն, բաղկացեալ սովորական կարմիր լաքէ, պարզ է և յստակ և կրէ զրոյժմ եկեղեցւոյ միւր ընդ սրածայր գոբիթի (թերևս Սուրբ Թովմայի Գերեզմանին վե-

րայ կառուցեալ հոյակապ Մայր Եկեղեցին որ զայտօթիւն ունէր Միլափուուսմ այդ ժամանակուս, որոյ շինուածոյն նմանու թիւն ունի, մասամբ, սոյն զրոյժատիպ, ըստ պատկերաց՝ զորս մեք տեսած եմք երկու տարբեր հրատարակութեանց մէջ): Գոբիթին յաջ և յահակ՝ տեսանելի են լատիններէն տառերն I և M: Հետագատութիւնը դեռ պակասին առ մեզ թէ արդէօք որոյ ներկայացուցիչք են այդոքիկ երկու տառերն:

Մակագրութիւնն որ ի յետին կոյս նամակին, զոր ի վեր յիշեցինք, ցուցանէ որ նամակն և, անտարակոյս, նաև գահաբեղէն պարունակող ոսկետուփն անկուրուստ ստացուեցաւ թագաւորին կողմէ: Լոնտոնի Արքեպիսկոպոս Հնդկաց Ընկերութեան Արձանագրութեանց մէջ կարդում ենք. — « Խօյայ կատարեալայով (Royal Katherine, « Առաջատանաւ ») ժամանեցաւ Պարոն

« Զէյմա Բընս (Mr. James Bunce) « բերելով պարգև մի յանձնաւորութենէ « ումեցէ որ ի Զեր կողմանս առ վեհա- « փառութիւն թագաւորի մերում: Ուրիշ « քան չ'եմք կարող առնել քան զարմա- « նալ որ Դուք ստանալով այդ պարգև « յանձնեցիք զայն յատկացեալ մի անձին, « փոխարէն յանձնարարելոյ առ մեզ (ըստ « սովորական ձեւակերպութեանց) որպէս « զի մեք մարթնայինք հաշիւ տալ առ « այն՝ ըստ տրամադրութեան: Արդ, թէ « արդեօք այդ պարգև բերողն ինչ պա- « տասխանի ունի բերել առ Զեզ (ի վե- « թաղարձին՝) մեք ո՛չ գիտեմք: Չիարդեցիք, « այլ ոեւէ միջոց չ'մնայ մեզ քան յան- « դիմանել Զեզ վրանս այս արարքին և « ծանուցանել Զեզ որ մեք խորհիմք թէ « անյամար է քաջալերել այսպիսի մի « գործելակերպ յետ այսու » »:

Տեսինք որ Ընդհանրի նամակն գրուե-
ցաւ Փետրուար 4ին, 1664 (ըստ Նոր
Տոմարի որ ի գործածութեան էր Միւլա-
փուռում, այդ քաղաքն լինելով ի ներքոյ
տիրապետութեան Փորթուգալացոց որք
արդէն հետևողք էին Նոր կամ Գրիգո-
րեան Տոմարին) որ համեմատի ընդ 25
Յունուար, 1664 (ըստ Հին Տոմարի որ
դեռ ի գործածութեան էր Մադրասում,
ըստ որում, որպէս գիտեմք, Անգղիացիք
ընդունեցին Նոր Տոմարն ո՛չ յառաջ քան
1752 թուականն): Նոյն օրն իսկ որ այդ
նամակն գրուեցաւ (25 Յունուար. Հ. Տ.)
Ընդգաղ յոյց զայն առ Մադրաս (որ է
իր հինգ մոնաչափ հեռի Միլափուռէն)
առ Սըր Եղուարդ Ուինտըր Sir Edward
Winter) Արևելեան Հնդկաց Ընկերութեան
Աւագ գործակատար Մադրասում: Թաջորդ
օրն (26 Յունուար, ըստ ժամանակակից
Արժանագրութեանց) Ռոյալ Կատարիսյ

նան մեկնեցաւ Մադրասէն, տանելով այդ
նամակն ընդ պարգևին և ժամանելով
յԱնգղիա վեց ամիս նաւորութենէ զկնի
(Յուլիսին):

Ուշադրութեամբ որոնեցինք Կարո-
լոս Երկրորդի Առանին թղթակցութեանց
ցանկն՝ 1664 տարւոյն պատմականի, բայց
ոեւէ գրաւոր պատասխանի չտեսինք Մար-
կոս Ընդհանրի նամակին: Անհնարին թուի
հաւատալ որ « Չուարճասէր Միլապետ »
մերժէր այդպիսի մի թանկագին գոհարե-
ղինաց պարգև: Խորհիմք թէ յաւել հա-
ւանական է որ նամակաբեր Պարուն Զէյմա
Բընսի միջոցաւ իւր բերանացի շնորհա-
կալութիւններն յայտնեց նամակագրին,
յարելով նոյն ժամանակ որ ըստ Արևե-
լեան Հնդկաց Ընկերութեան Որինական
կարգադրութեանց՝ անտրամադիր գտանէր
զինքն յանձն առնուլ միջամուտ լինելոյ
Հնդկաստանի վերաբերելի ոեւէ գործոց
մէջ: Մակայն եթէ, իրօք, զրաւոր պա-
տասխանի առաքեց, այդ գրութիւնն այլևս
գոյութիւն չ'ունի:

Սըր Եղուարդ Ուինտըր՝ Լոնտոնի Ըն-
կեր Եղուարդ Աւագ Գործակատար ընտրուե-
ցաւ, Մադրասում, 1661ին: Միահեծան
և ինքնակամ բնաւորութեան տէր լինե-
լով՝ արդէն 1664ին (Ընդհանրի նամակի
գրութեան տարին) ծանր խռովութիւն և
երկպառակութիւն տիրէին ի մի կողմանէ՝
ընդ մէջ իւր և Մադրասի իւր խորհրդակ-
ցաց և ի միւս կողմանէ՝ ընդ մէջ իւր և
Լոնտոնի Տնօրինաց որք, վերջ ի վերջոյ,
1665ին, նորան պաշտօնանկ արարին:
Վասն որոյ՝ ի պատճառս իւրեանց մէջ ծա-
գած զժողովեանց և պառակտմանց՝ Սըր
Եղուարդ Ուինտըր՝ Քաղաքապետ Ընդհանրի
նամակն և պարգևն առաքեց Անգղիոյ
Թագաւորին, Պարուն Զէյմա Բընսի միջո-

1. The East India Company, London, to The
Agent and Council at Madras, 21, Dec 1664
(Letter-Book. Vol. III. p. 439). Ծնորդապարտ եմ
առ Miss L. M. Anstey, գիտնական փառուղբոյն
յայտնի Հնդկաբան Sir Richard Temple, որոյ մի-
ջոցաւ մարթնայ մեզ բերել այն նամակն արեւմտեան

Լոնտոնի India Office: Հետեւոյ և պատմաբան Mr.
William Foster Են, որում և պարտիմ նոյնպէս եմ
ընթերցակուութիւն:

2. Dr. Temple. History of the British Empire
in India and Mr. East (Chap. XLI. p. 663).

ցաւ, անկախ սովորական գործելակերպից, որով ստացաւ Տնօրինաց յանդիմանական նամակն՝ զոր ի վեր յիշատակցինք, և որոյ ի պատասխանի՝ Մադրասի Խորհուրդն, 9 Յունուար, 1666, թուակիր նամակն (O. C. 3147) առ Լոնտոնի Ընկերութիւնն, գրէ. — «Պարգն որ «առաքեցաւ աստէն առ վեհափառ Թաւառ մեր, Պարոն Զէյմս Բլենսի յանձնակատարութեամբ, մասնատրապէս «յանձնարարուած էր շնորհիւ Սըր Էդուարդ Ուինտըրի, որ խորհեցաւ նեւ «զուծիւն չպատճառել Զեր Արքանապա «ստութեանց այսպիսի մի զուգնաքիայ «խնդրով»։ Ապագէն՝ տարակոյս չ'ու նիմք որ, իրօք, Հայազգի Մարկոս Բարգադ Գաղաթապետ էր Միլափուռայ, 1664ին, ըստ վերլիշեալ վկայութեանց։

Հարաւային Հնդկաստանում՝ Միլափուռ է մի յամենահին քաղաքաց, Հնդկաց Տամիլ լեզուաւ (տեղւոյն բուն խօսակցական և նաև կարևոր դասական լեզու), Mailapur նշանակէ «Քաղաք սիրամարգաց» և, ընդհանրապէս, համարի լինիլ նոյն՝ զոր Պողոտէոս յիշատակէ «Malli-Arpha» անուամբ։ Հին Միլափուռի աւերակներն (ժամանակաւ տեղի տալով Նոր Միլափուռին) դեռ տեսանելի են։ Հայ վաճառականներ այս տեղ հաստատուեցան առ նուազն՝ ԺԵ դարուն և պիտի ցուցանեմք, յիւրում տեղւոյ, որ Հայերն մեծ դեր կատարեցին՝ Նոր Միլափուռի կամ St. Thomé de Maliapourի հիմնադրութեան և կառուցման նախապատճառ լինելով, ԺՉ դարու սկիզբներում, փորթուղալոց տիրապետութեան սկզբնաւորութեան միջոցին։

Միլափուռ քաղաքին յարակից՝ գոն երկու բլուրներ տեսանելի ծովից, որոց մին կոչման է «Կրտսեր Բլուր» կամ «Կրտսեր Լեռն» (Little Mount), որոյ վերայ քարանձաւի մի մէջ Թովմաս Առաքեալն քարոզեց Աւետարանն, ըստ հնագոյն Պատմագրից։ Սորին կից՝ գոյ միւս մի, բարձրագոյն քան զառաջինն, «Բլուր» կամ «Լեռն Սրբոյն Թովմայի»

(St. Thomas Mount), պարզելով յայս կոյս՝ ծովն լայնատարած և յայնկոյս՝ լեռնաքամակ ծառազարդ, որոյ վերայ Թովմաս ի ծունգս անկեալ աղօթէր՝ երբ նիզակահար մարտիրոսացաւ զոհ լինելով բրահմանական բուռն ատելութեան՝։

Կարգ մի բարձրայօն պատմաբանից՝ Թովմայի քարոզչութիւնն Հարաւային Հնդկաստանում համարին որպէս լուրջ առասպելախառն զրոյցք, որովհետև ականատեսն չ'ունեցան որ անցքերն անձամբ պատմէին սերկեանս յաւուր ոմանց ցնեական պատմարանից։ Թող նախ աչաց յանդիման ունենամք ժամանակի հնութիւնն, Թովմաս իւր կենաց վերջին մասն անցրեց Հնդկաստանում 52 թուականէն մինչև 68։ Մտածեցէք. մինչդեռ Հայաստանի թագաւորն, Տրդատ Առաջին, արքայաւայել խնդոյցներով՝ պատուասիրում էր Հռովմի մէջ, ստանում Հայաստանի Արքայական Թագն Ներոն Կայսեր ձեռամբ և փառաւորաւում մարմարիոտեալ Արձանին (զոր Արձան կարելի է տեսանլ մինչցայսօր ֓արիզի Լուբրի Թանգարանին մէջ), Միլափուռի մէջ Թովմաս Առաքեալ կատարում էր Քրիստոսի պատուիրանն, «Երթայք, աշակերտեցէք զամենայն հեթանոս»։ Ուզիմք ասել թէ խնդիրն յերկեան և յեռանդեան հարց չ'է այլ շատ հեռաւոր ժամանակի։ Ուրեմն թող չփորձեմք, ընդունայն, արուեստական ուղտեր հնարել և ջանամք վարել նոցա «ընդ ծակ ասղան», այլ յաւէտ՝ խելամոտէն շօշափել խնդիրն և եթէ անկարող հերքել ըստ ամենայնի՝ հաւատ ընծայելի փաստիւք, թող ունկնդիր լինիմք և անսամք բանից հնագոյն և ժամանակին յաւել մերձաւոր պատմչաց։ Թող անհաւատացողդ ասեն մեզ թէ իւրեանք ունին ոեւէ դրական ապացոյց որ մեզ հաւատեօք համոզէ թէ

1. Թովմաս Առաքելոյ գործոց և վարուց մանրամասնութեանց մասին, Sba Maffei, History of India, Col. Ag. 1690.

Թովմաս չգնաց Հնդկաստան: Վկայեալ աւանդութիւնն դիւրութեամբ չմահանայ:

Եւսեբիոս (*Hist. Eccl.* III. I.), Հերոնիմոս, Որոգինէս, Սոկրատէս Պատմիչ, Հիպպոլիտէս, Սոփրոնիոս և այլ նոյնաւարաս հնազոյն Պատմաբանք վկայեն թէ Թովմային վիճակեցաւ Պարթևաստանի Աւաքելութիւնն: Սակայն՝ Արևմտեան Գրիստոնէից Յայսմաւուրք և Հնդկաբնակ Գրիստոնէայք միաբանին ի վկայել թէ Թովմաս քարոզեց նաև Պարսից, Բաքարիացոց, Եթէովպէացոց և Հնդկաց զոր St. Paulinus Natali վաւերացուցանէ հետեւեալ բանիւր:

Parthia Matheum Complectitur,
India Thomas¹. Դէ Գուին, այսպէս վկայէ առ այս: — « Հոյւր Հեղինակք, « երկրորդ Յունական և Ասորական, միա- « բանին՝ համաձայնութեամբ հաստատե- « լով թէ Թովմաս թափանցեաց ի Հնդկաս- « տան առ ի քարոզել գրանն² »: Նոյնն հաւաստեն նաև « Գործք Թովմայի » (*Acta Thomae*):

(Շարունակելի)

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ



ՊԱՍՏԱԿԱՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ Մ'ԱՌԹԻ

(Առ ազնիւ Խմբագրութիւն ՆԱԽԱՍԱՐԻ Թերթի)

ՆԱԽԱՍԱՐԻ գրական գեղարուեստական ամսաթերթի ֆետր. ի և Մարտի Պրակներուն մէջ հրատարակուեցաւ հետաքրքրաշարժ ուղեգրութիւն մը, հայ եպիսկոպոսի մը կողմանէ 1489-ին Ատլանդեանի ջուրերուն վրայ կատարուած շրջագայութեան:

Մարտիրոս Երզնկայ եպիսկոպոսի գրութիւնն է, զոր փարիզեան ձեռագրի վրայէն Սէն-Մարդէն թագմանած էր զաղղիբէրէնի և հրատարակած *Journal Asiatique* թերթին մէջ 1826-ին³, որմէ այժմ Պ. Յ. Քիւրտեան վերստին կը թարգմանէ հայերէն լեզուի:

Մինչև հոս ոչինչ տարօրինակ և զովեստի արժանի են թէ՛ թարգմանիչը և թէ՛ հրատարա-


կիչը, որ ազգային այսպիսի հետաքրքրական պատմիկ մ'ընդհանրութեան ծանօթացնելու փորձն ունեցած են: Աւելի ևս զովելի կը համարինք ՆԱԽԱՍԱՐԻ Մեծ. Խմբագրութիւնն որ աննախանձ հոգով հրապարակաւ կը դիմէ՝ « այս քսեւաւսի երեւելի և մասնաւորապէս Մխիթարեան Հայրերուն ուշադրութիւնը որ քարհնէին խմբագրութեան յայտնել այս մասին իրենց ունեցած կարծիքները և կամ ծաւորութիւնները, երբ ունին »:

Բանասիրութեան առջև ետր յայտնութիւն մը չէ այս գրութիւնը. հրատարակուած է նաև *Revue de l'Orient* թերթին մէջ 1862-ին, Հ. Ալիշան ալ ռազ-վանսի մէջ (էջ 194-197) կը յիշատակէ թէ՛ հեղինակը և թէ՛ ուղեգրութիւնը և քաղելով կը գտէ հայ բնագրին այն մասը՝ որ վեհնեղոյ նկարագրութեան կը պատկանի:

Դիտելու է միայն որ Մարտիրոս եպիսկոպոս եւրոպական ափերէն չհեռանալով Ատլանդեանի մէջ խորատուգտելով, և տեղի չկայ Գոլմուպոսի բարեբաղդ և աշխարհագիտ նաւարկութեան հետ համեմատելու:

Թարգմանութեան նկատմամբ ալ մի քանի անուանց ստուգութիւնը խաթարուած կ'երևի անվարժութեամբ. օրինակի համար երբ փոխառնակ իննովկենտիոս քահանայապետի՝ Սլեմեդ-ի մը կը հանդիպինք, կամ երբ աւետարանական երեք մոզերը Մամէս թագաւորներ կ'ըլլան:

Հ. Յ. ԱՌԻՐ



ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Գ.

Կարդալով « Բարձրափանք »

Ա. Բ. ԳԻՐԵ

(էջը 1 - 72)

Շատ մեծ հաճոյցով եւ միանգամայն շատ մեծ զայրութով կարդացի « Բարձրափանք » ի երկու գիրքերը. հաճոյցով՝ որովհետեւ ազուր բաներ կան մէջը, զայրութով՝ որովհետեւ տգեղ բաներ կան մէջը: Աղուր բաներուն վրայ խոսողներ եղան, բայց տգեղներուն վրայ՝ իմ տեսակէտովս՝ խօսուած բան մը չտեսայ: Այդ ոչ հաճելի պաշտօնը ահա ես ինքս կը ստանձնեմ, յուսալով օգտակար ըլլալ, այդ է միակ նը-

1. Dr. Noland. *History of the British Empire in India and the East* (Chap. XXXIII. p. 571).

2. Des Guignes. *Acad. des Inscript* (liv 5. p. 23).

3. Տե՛ս է Ներ Մասնագիր. Հ. Ա. Ղ. է Մարտիրոս Երզնկայի և յէջ 1890, Սեն Մարգրէի գործոց մէջ, Եւս. փոք 1880 թ. 1, յաւելած, էջ 33.